Բաց կառավարման գործընկերություն ՀԱՅԱՍՏԱՆ

www.ogp.am

ՏԵՂԵԿԱԳԻՐ # 2

մարտ 2015

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Բրիտանական դեսպանատուն Երևանում

ԲԿԳ աշխատանքային խմբի ընդլայնված նիստը կայացավ

2015թ.-ի մարտի 3-ին տեղի ունեցավ Բաց կառավարման գործընկերության աշխատանքային խմբի ընդլայնված նիստը: Նիստին մասնակցում էին ոչ միայն ԲԿԳ աշխատանքային խմբի անդամները, այլև տեղական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Միջոցառումը կազմակերպել էր ՀՀ կառավարությունը Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ և Երևանում Բրիտանական դեսպանատան ֆինանսական աջակցությամբ:

Ընդլայնված նիստի նպատակն էր հանրությանը ներկայացնել ԲԿԳ հայաստանյան Գործողությունների երկրորդ ծրագրի իրականացման ընթացքը և քննարկել Կառավարություն-քաղհասարակություն համագործակցության արդյունավետ ուղիները:

Կարդալ >>>

Open Government Partnership

Բաց կառավարման գործընկերությունը ստեղծվել է 2011 թվականին 8 երկրների նախաձեռնությամբ՝ ԱՄՆ, Բրա-զիլիա, Ինդոնեզիա, Մեքսիկա, Նորվեգիա, Ֆիլիպիններ, Հարավային Աֆրիկա, Միացյալ Թագավորություն: Այսօր արդեն նախաձեռնությանը միացել է 65 երկիր: ԲԿԳ հռչակագրում ասվում է, որ այն նպատակ ունի բարձրացնել կառավարության հրապարակայնությունը, խթանել հասարակության մասնակցությունը հանրային կյանքի կառավարմանը, ձևավորել առավել թափանցիկ և պատասխանատու իշխանություններ:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

ԲԿԳ Գործողությունների ծրագրի իրականացման ընթացքը

2015թ.-ի մարտի 3-ին Կառավարությունը ներկա-յացրեց ԲԿԳ Գործողություն-ների ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ ամփոփ հաշվետվությունը առ 2015թ.-ի փետրվարը:

Կարդալ >>>

ԱԱԹՆ-ին անդամակցելու գործընթացն ակտիվ քննարկման փուլում է

2015թ.-ի փետրվարին մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել ՀՀ կառավարության և Արդյու-նահանող արդյունաբերության թափանցիկության նախա-ձեռնության (ԱԱԹՆ) գրասեն-յակի ղեկավարների հետ: Քաղաքացիական հասարակու-թյունը ևս քննարկում է ԱԱԹՆ-ին անդամակցելու հեռանկար-ները: Կարդալ >>>

2015թ.-ի մարտի 3-ին ՀՀ կառավարության և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ համատեղ տեղի ունեցավ Բաց կառավարման գործընկերության աշխատանքային խմբի ընդլայնված նիստը: ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ, ԲԿԳ հայաստանյան համակարգող Գուրգեն Դումանյանն իր բացման խոսքում նշեց, որ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության շրջանակներում կառավարություն-քաղաքացիական հասարակություն համագործակցությունն այլևս ավանդույթ է և արդեն իսկ ձևավորված իրողություն: Սա չափազանց կարևոր փաստ է, քանզի ԲԿԳ նախաձեռնության ողջ փիլիսոփայությունն ու տրամաբանությունը կառուցված են այդ համագործակցության և երկխոսության վրա:

Ներկաներին ողջունեց նաև Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան տիկին Քեթի Լիչը, ով բարձր գնահատեց նման հանդիպումների կայացումը, և հույս հայտնեց, որ կառավարություն-քաղհասարակություն համագործակցության այս ձևաչաձն իր զգալի դրական ազդեցությունը կունենա բաց և թափանցիկ կառավարման համակարգի խթանմանը:

Ավելին>>>

«Մենք քաջ գիտակցում ենք, որ պետական կառավարման համակարգի թափանցիկության և հաշվետվողականության մակարդակի բարձրացումն այնքան էլ դյուրին գործընթաց չէ, քանզի պահանջում է քաղաքական կամք և հետևողական ջանքեր: Եվս մեկ անգամ ցանկանում եմ շեշտել, որ ՀՀ կառավարությունը հաստատակամ է քաղաքական կամքի դրսևորման հարցում և ձեզ հետ միասին հետևողականորեն շարունակելու է իր առջև դրված խնդիրների իրագործումը»,- *ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ, ԲԿԳ համակարգող Գուրգեն Դումանյան:*

ԲԿԳ Գործողությունների ծրագրի հանձնառությունների իրականացման ընթացքը

առ 2015 թվականի փետրվար

1. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում,

2. Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում

Միջոցառումների իրականացման նպատակով ներկայումս տարվում են բանակցություններ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) հետ՝ կազմվել է «Օժանդակություն ՀՀ կառավարությանը հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության ավելացման համար» ծրագրի նախագիծը, որի նպատակն է օժանդակել ՀՀ Կառավարությանը՝ ապահովելու հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Ծրագրի նախագիծը դեռևս գտնվում է քննարկումների փուլում և նրանում ընդգրկված են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությանն առնչվող՝ ««Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա տվյալների թվայնացում և հրապարակում» և «Հանքարդյունաբերության թափանցիկության ապահովում» միջոցառումները: Ինչպես տեղեկացրեց ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ընդերքի վարչության պետ, ԲԿԳ աշխատանքային խմբի անդամ Վարդան Վարդանյանը՝ մոտ ժամանակներս բոլոր պայմանագրերը կստորագրվեն և աշխատանքները կսկվեն իրականցվել: ԱԱԹՆ-ին (EITI) անդամակցելու հարցի շուրջ փետրվարին ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Դավիթ Հարությունյանի մոտ հանդիպում էտեղի ունեցել ԱԱԹՆ գրասենյակի ներկայացուցիչներ Ջոնաս Մոբերգի և Ռիչարդ Դիոնի հետ: Նրանք նշել են, որ Հայաստանում գործող մի քանի հանքարդյունաբերող կազմակերպություններ դրական են գնահատել ԱԱԹՆ-ին անդամակցելու Հայաստանի նախաձեռնությունը և արդեն իսկ պատրաստակամություն են հայտնել բաց և թափանցիկ աշխատել:

Քաղհասարակության դերը ԱԱԹՆ-ին անդամակցման գործընթացում

2015 թվականի փետրվարի 13-ին ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը հյուրընկալեց դասախոսություն-քննարկում քաղաքացիական հասարակության դերը Արդյունահանող արդյունաբերության թափանցիկության նախաձեռնության (EITI) մեջ թեմայով: Վերջինս բնական ռեսուրսներից ստացվող եկամուտների կառավարման հրապարակայնության և թափանցիկության միջազգային չափանիշ է:

Ավելին >>>

ԱԱԹՆ-ն նախաձեռնվել է Բրիտանիայի նախկին վարչապետ Թոնի Բլեերի կողմից 2002 թ.-ին Յոհանեսբուրգում կայացած Կայուն զարգացում համաժողովի ժամանակ: ԱԱԹՆ-ն կառավարությունների, արդյունահանող ձեռնարկությունների և քաղաքացիական հասարակության միջազգային կոալիցիա է բարելավելու համար բնական ռեսուրսների կառավարման հաշվետվողականությունը և թափանցիկությունը:

3. Առողջապահության ֆինանսավորման տեղեկատվության հանրային մատչելիության ապահովում

Ծրագրի իրականացման նպատակով ստեղծվել է առողջապահության համակարգի ֆինանսական պորտալ՝ www.sha.am հասցեով, որտեղ համացանցի բոլոր օգտատերերը կարող են ստանալ տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծրագրերի վերաբերյալ, ինչպես նաև նախագծվել է հավաքագրվող տվյալների վերլուծական-հաշվետվական կայք, որի միջոցով համապատասխան հաշվետվությունները և վերլուծությունները հասանելի կլինեն ինչպես հանրությանը, այնպես էլ բժշկական մասնագիտական շրջանակներին: Ներկայումս ընթացքի մեջ են նշված կայքի տեղեկատվության համալրման և փորձարկման աշխատանքները:

4. ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների հայտարարագրերի թափանցիկության ապահովում

2014 թվականի սեպտեմբերի 12-ի N 01/54-14 գրությամբ ՀՀ Կառավարության աշխատակազմ է ներկայացրել «Բաց կառավարման գործընկերություն» ծրագրի 4-րդ կետով նախատեսված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1835-Ն և 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Որոշումն ընդունվել է փետրվարի 19-ին, ուժի մեջ կմտնի հրապարակումից տասը օր հետո:

ՀՀ կառավարության որոշումը N150-Ն 19.02.2015.

Հայտարարագրերի հավաստիության ապահովման նոր մեխանիզմներ

«Այսուհետ հայտարարագրերում ներառված տվյալների հավաստիություն հնարավոր կլինի ճշգրտել, քանի որ միանում ենք էլեկտրոնային զագսի հետ, ճանապարհային ոստիկանության ավտոմեքենաների ռեգիստրի հետ, Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց ռեգիստրի և անշարժ գույքի կադաստրի հետ: Այսպիսով, հայտարարագրերի վերլուծության փուլում կկարողանանք համեմատել եղած ռեգիստրներում ունեցած տեղեկությունների հետ: Հարկայինի հետ կապը դեռևս քննարկման փուլում է»,- *Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ, ԲԿԳ աշխատանքային խմբի անդամ Արմեն Խուդավերդյան:*

5. Պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակում

Գնումների ոլորտին առնչվող պարտավորության կատարման մասով ներկայումս աշխատանքներ են տարվում պետական գնումների բողոքարկման խորհրդի նիստերի առցանց հեռարձակման համար պահանջվող սարքավորումների ձեռքբերման ուղղությամբ: Նախատեսվում է, որ նիստերի առցանց հրապարակումները կարխիվացվեն, և մարդիկ հնարավորություն կունենան դրանք դիտել նաև նիստերի ավարտից հետո:

6. Համայնքային միկրոհարցումների ծրագրի ներդրում 10 համայնքներում

Ընտրվում են թիրախային համայնքները, իրականացվում են աշխատանքներ՝ ծրագրային ապահովման ուղղությամբ: ՀՀ փոխվարչապետի 13.08.2014թ. №01/16/4383-14 գրությամբ առաջարկվել է համայնքների ղեկավարներին՝ ԲԿԳ պարտավորությունների 6-րդ և 11-րդ կետերի կատարման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ: Աշտարակի քաղաքային համայնքի ավագանին ս.թ. հունվարի 26-ին ընդունել է №7-Ա որոշումը, համաձայն որի նախատեսվում է Աշտարակի քաղաքապետարանի կողմից 2015 թվականին նշված աշխատանքների կամ մատուցվող ծառայությունների առաջնահերթությունը որոշելու նպատակով կազմակերպել sms միկրոհարցում:

Համայնքային միկրոհարցումներ

SMS հարցումը հասարակական կարծիքի ուսումնասիրության, քաղաքացիների դիրքորոշումների գնահատման նորագույն միջոց է: Այն հնարավորություն է տալիս առավել արդյունավետ և արագ կազմակերպել կարճ հարցումներ:

Հարցմանը մասնակցում է միայն հարցվողը՝ օգտագործելով իր բջջային հեռախոսը:

SMS հարցումներին մասնակցելը միայն քաղաքացիների ցանկությամբ է::

Ծրագրի մասին >>>

7. Պետական քաղաքականությունների և օրենսդրական բարեփոխումների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացի ապահովում

Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարությունում իրականացվում է աշխատակարգերի և միջազգային փորձի ուսումնասիրություն:

8. Պետական կառավարման մարմինների օրինաստեղծ գործունեության մասին հանրության իրազեկում

ՀՀ կառավարության 2012 թ.-ի ապրիլի 5-ի «Իրավական ակտերի նախագծերի մշակման մեթոդական ցուցումներին հավանություն տալու և ՀՀ կառավարության 2010 թ.-ի հոկտեմբերի 28-ի N 42 արձանագրային որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 13 արձանագրային որոշմամբ կարգավորվել են իրավական ակտերի մշակման կանոնները: Բացի այդ, իրավական ակտերի հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի մշակման կանոնները ամրագրվել են ՀՀ կառավարության 2015 թ.-ի հունվարի 22-ի «Հայեցակարգերի, ռազմավարությունների, ծրագրերի կազմման մեթոդական ուղեցույցին հավանություն տալու մասին» N 2 արձանագրային որոշմամբ: Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայումս, միջազգային փորձագետների ներգարվմամբ, իրականացվում է իրավական ակտերի մշակման և հանրային իրազեկման հետ կապված հարցերի կանոնակարգման աշխատանքներ:

Հարկ է նշել նաև, որ «Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագրի» 3.8-րդ կետով նախատեսվում է նորմատիվ իրավական ակտերի թվայնացում, այդ թվում նորմատիվ իրավական ակտերի էլեկտրոնային պետական գրանցում: Համաձայն նշված ծրագրի նորմատիվ իրավական ակտերի պետական գրանցման ամբողջ գործընթացը կիրականացվի էլեկտրոնային եղանակով: Ներկայումս տվյալ հարթակի ստեղծման նպատակով ընթանում են տեխնիկական լուծումների վերաբերյալ քննարկումներ:

«ԲԿԳ գործընթացների մասին իրազեկում մարզերում» ծրագրի ամփոփում

«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ն փետրվարի 3-ին Երևանում կազմակերպված կլոր սեղան-քննարկմամբ ամփոփեց «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն» խորագրով մարզային դասընթացների շարքը: ԼՀԱ նախագահ Սուրե Դեհերյանը նշեց, որ մարզային ՀԿ-ներին նախաձեռնության մասին իրազեկման նպատակով Գորիս, Ալավերդի, Գյումրի, Արմավիր, Վանաձոր, Գավառ և Հրազդան քաղաքներում կազմակերպված դասընթաց-քննարկումներին մասնակցել են ավելի քան 150 անձինք՝ տեղի ՀԿ-ների, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ և, պարզապես, հետաքրքրված քաղաքացիներ:

Կարդալ ավելին >>>

9. ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ընտրության կարգում փոփոխությունների կատարում

Ներկայացված առաջարկի հիման վրա փոփոխություն է կատարվել ՀՀ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգում: Միաժամանակ մշակման փուլում է «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության» կարգը: Ինչպես նշեց ՀՀ ԿԳՆ աշխատակազմի հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ, ԲԿԳ աշխատանքային խմբի անդամ Սյուզաննա Մակյանը՝ փոփոխված կարգը կներկայացվի հանրային քննարկմանը և մինչև մարտի վերջ կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը:

10. Հանրային ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում ՏԱ և հակակոռուպցիոն ոլորտում

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ Շուշան Դոյդոյանը նշեց, որ ՀՀ քաղծառայության խորհրդի հետ արդեն իսկ փեռք է բերվել պայմանավորվածություն ՏԱ ուսուցումների վերաբերյալ և առաջնային կվերապատրաստվեն ՀՀ գերատեսչություններում նորանշանակ տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու ծառայողները: Ներկայումս ուսուցումների անցկացման ֆինանսական հարցերն են քննարկվում:

ՏԱ պատասխանատուների ցանկը >>>

ԲԿԳ գործընթացների մասին իրազեկում մարզերում ծրագրի ամփոփում

«Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ-ն փետրվարի 3-ին Երևանում կազմակերպված կլոր սեղան-քննարկմամբ ամփոփեց «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնություն» խորագրով մարզային դասընթացների շարքը: ԼՀԱ նախագահ Սուրե Դեհերյանը նշեց, որ մարզային ՀԿ-ներին նախաձեռնության մասին իրազեկման նպատակով Գորիս, Ալավերդի, Գյումրի, Արմավիր, Վանաձոր, Գավառ և Հրազդան քաղաքներում կազմակերպված դասընթաց-քննարկումներին մասնակցել են ավելի քան 150 անձինք՝ տեղի ՀԿ-ների, ԶԼՄ-ների ներկայացուցիչներ և, պարզապես, հետաքրքրված քաղաքացիներ:

Կարդալ ավելին >>>

11. Խոշոր համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկության ապահովում

20,000 և ավելի բնակչություն ունեցող համայնքների համացանցային կայքերի թափանցիկության ապահովման հետ կապված աշխատանքները իրականացվում են շուրջ երեք տարի: Այդ համայնքները 48 քաղաքային համայնքերից ընդամենը 16 են: 11 համայնքներ աշխատում են Համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով, որը կիրառվում է նաև որպես համացանցային կայք: Պարբերաբար կատարած դիտարկումների արդյունքում պարզվել է, որ 16 քաղաքային համայնքների կայքերից 14-ը թարմացվում են, սակայն որոշակի թերություններով, ժամանակավորապես չի գործում Գավառի քաղաքապետարանի կայքը (http://gavariqaghaqapetaran.am/): Նշված 16 համայնքների համացանցային կայքերից 5-ը ձևավորված են այլ կազմակերպությունների կողմից, բայց անհրաժեշտությունից ելնելով հղում են տվել ՀԿՏՀ-ին (ք.Հրազդան-www.hrazdan.am, ք.Չարենցավան-www.charentsavan.am, ք.Վանաձոր-http://vanadzor.am/), որտեղ ավելի թափանցիկ է երևում համայնքների բյուջեյի կատարողականը (աղուսյակը կցվում է):

Բոլոր համայնքներն էլ հիմնականում անհրաժեշտություն ունեն տեխնիկասարքավորումների թարմացման ու ձեռք բերման. ուստի, կատարվում են ուսումնասիրություններ, թե որ համայնքներն են ի զորու ձեռք բերելու այդ սարքավորումները՝ ավագանու նիստերը, հանրային քննարկումներն ու ՏԻՄ ասուլիսները առցանց հեռարձակելու գործընթացը սկսելու նպատակով:

ԲԿԳ Գործողությունների ծրագրի ժամանակացույցը

ԲԿԳ գլխավոր գրասենյակը հրապարակել է երկրների ԲԿԳ ժամանակացույցը 2015-2018 թվականների համար: Ըստ այդ ժամանակացույցի ՀՀ Գործողությունների երկրորդ ծրագիրը պետք է ավարտված լինի 2016 թ.-ի հունիսին, և Կառավարությունը պետք է սկսի նախագծել Գործողությունների երրորդ ծրագիրը:

Կարդալ >>>

Բաց կառավարման գործընկերություն ՀԱՅԱՍՏԱՆ

ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԻՆՆՈՎԱՑԻԱ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

www.ogp.am

Օգտակար հղումներ

Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնություն >>>

Հայաստանը ԲԿԳ միջազգային նախաձեռնության անդամ >>>

ԲԿԳ Հայաստանի պաշտոնական կայքը >>>

Բաց կառավարումը հիմա >>>

ԲԿԳ հայաստանյան քաղհասարակությանը կարող եք անդամակցել ogparmenia@gmail.com էլեկտրոնային փոստին միանալով:

Բրիտանական դեսպանատուն Երևանում

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԿԳ տեղեկագիրը պատրաստվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից իրականացվող «Քաղաքացիական հասարակություն բաց և հաշվետու կառավարության համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է Երևանում Բրիտանական դեսպանատան կողմից: Ծրագրի շրջանակներում արտահայտված կարծիքները կարող են չհամապատասխանել Բրիտանական կառավարության տեսակետներին:

© Ինֆորմացիայի ազատության կենտրոն -2015